

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՍՓԻԻՌԻԱԶԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

Հատոր Երկրորդ, 1946–1985

Հեղինակ՝ Գեղամ Սեւան

Հովանավոր՝ Յարութիւն Սիմոնեան

Նիւթական միջոցների սղութեան պատճառով անտիպ մնացած եւ հրատարակչութիւնների գորոցներում լոյս եւ ընթերցող երագող գրքերի արհեստավարժ հետախոյզ եւ սրտացաւ բարեկամ Յարութիւն Սիմոնեանի ամբողջական հոգաբարձութեամբ, աւարտուող 1997 տարում լոյս աշխարհ եկաւ գրող եւ բանասիրական գիտութիւնների Դոկտ. Գեղամ Սեւանի «Սփիւռֆահայ գրականութեան պատմութեան ուրուագծեր» աշխատութեան վաղուց սպասուող երկրորդ հատորը:

Աշխատութեան առաջին հատորը, որն ընդգրկում էր սփիւռֆահայ գրականութեան 1920–1945 տարիների առաջին շրջանը, լոյս էր տեսել հեղինակի կենդանութեան օրով, 1980ին, եւ գրասէր հասարակութեան կողմից, Հայաստանում եւ Սփիւռքում, գտել չեւր ընդունելութիւն, արժանացել բարձր գնահատականի: Սակայն, հակառակ նպաստաւոր այդ իրողութեան եւ սփիւռֆահայ գրականութեան նկատմամբ ստեղծուած համընդհանուր կենդանի հետաքրքրութեան, որի պաշտօնական արտայայտութիւնը եղաւ 1985ին Մ. Արեղեանի անուան գրականութեան ինստիտուտի Սփիւռֆահայ գրականութեան հարցերին նուիրուած երկօրեայ նիստում ակադեմիկոս Է. Զրբաշեանի բանաձեւած հետեւեալ ծանրակշիռ հաւաստիացումը. «Այժմ ոչ

ո՛ր չի տարակուսում, որ յետ հոկտեմբերեան հայ գրականութեան պատմութիւնը լրիւ ու ամբողջական չի կարող համարուել առանց Իրանից, Մերձաւոր Արեւելից մինչեւ Ֆրանսիա եւ Ամերիկա ձգուող տարածութեան վրայ ստեղծուած, այժմ էլ շարունակուող գրականութիւնը»: Կրկնում եմ, հակառակ նպաստաւոր այս իրողութեան, գրասէրներին անհրաժեշտ եղաւ սպասել 17 տարի, մինչեւ լոյս կը տեսնէր «Ուրուագծեր» աշխատութեան եզրափակիչ երկրորդ հատորը, որի ֆննութեան էլ նուիրուած է սոյն յօդուածը:

Սոյն երկրորդ հատորի հրատարակութեամբ առաջին հատորի 7 գլուխներ եւ 360 էջ ծաւալը, ինչպէս նաեւ 30 էջ մանրատառ ծանօթագրութիւններ, որոնք զգալի ներդրում են 15 գլուխներից եւ 700 էջերից բաղկացած պատկանելի այս աշխատութեան գիտական ու մատենագիտական ընդհանուր արժէքի վրայ:

Աշխատութեան երկրորդ հատորը տպագրուել է ՀՀ ԳԱԱ Մանուկ Արեղեանի անուան Գրականութեան Ինստիտուտի Գիտական Խորհրդի որոշմամբ, երաշխաւորութեամբ՝ Բանասիրական Գիտութիւնների Դոկտոր Լ. Ասմարեանի եւ Բանասիրական Գիտութիւնների թեկնածու Մ. Վ. Մաքսապետեանի եւ պատասխանատու խմբագրութեամբ Բանասիրական Գիտութիւնների թեկնածու

Վարդան Փարթամյանի: Այն ընդգրկում է սփիւռփախյալ գրականութեան երկրորդ 1946-1985 տարիների շրջանը, հետեւեալ թեմաների յաջորդականութեամբ.

ա. շարունակուող կարօտի գրականութիւն.

բ. Նոր Կարօտի գրականութիւն.

գ. Յանուն հայրենիքի... պատուանդանուած Հայրենիքով.

դ. Յանուն Հաւատի եւ սեփական արժանապատուութեան.

ե. Ընդդէմ եւ յանուն հայապահպանման.

ը. Մարդերգութիւն, գրական նոր որակ.

Հատորի բազմաթիւ անդակութիւնը ամբողջացնելու համար յիշենք հովանաւոր Յարութիւն Սիմոնեանի խօսքը, գրականագէտ Ազատ Նոյազարեանի խօսքը Գեղամ Սեւանի մասին, հանգամանալից ներածութիւնը, վերջաբանը, ընդարձակ ծանօթագրութիւնն ու անուանացանկը:

Երկհատոր 700 էջ ծաւալով այս պատկանելի աշխատութիւնը հեղինակը ինչո՞ւ է անուանել «Սփիւռփախյալ գրականութեան պատմութեան ուրուագծեր» եւ ոչ թէ «Պատմութիւն»: Տարբերութիւնը, ինձ թուում է, պայմանաւորուած է երկու հիմնական գործօններով. նիւթի շատ մեծ ծաւալով, բազմաժանրութեամբ, եւ հեղինակի վերաբերմունքով, զոր այսպէս է ձեւակերպել հեղինակը. «Այս գրքերը, ոչ քիչ դժուարութեամբ, տարիների ընթացքում գրուել են սփիւռփախյալ գրականութեան նկատմամբ տաժած խորին սիրով ու նուիրումով, անբանածելի պաշտամունքով դէպի նրա անցած, ներկայ, գալիք մշակները... իսկ միւս կողմից իսկական համեստութեամբ եւ գիտութեան ու գրականութեան նկատմամբ ունեցած բարեխղճութեամբ եւ ակնածանքով:»

Եւ իրօք, աշխատութիւնը «Սփիւռփախյալ գրականութեան պատմութիւն» վերնագրելու համար հարկ էր, որ այն ընդգրկէր Սփիւռփի տարածքում 65 տարիների ընթացքում ստեղծուած

գրականութիւնը իր բոլոր ժանրերով: Այն ինչ հեղինակը, կանխելով ֆննդատներին եւ տեղիք չտալու համար հաւանական թիւրիմացութիւնների բ. հատորի վերջաբանում գրում է. «Մեր ուսումնասիրութեան ծիրից դուրս են մնացել գրական կարեւոր այլ ժանրեր՝ թատերգութիւնը, երգիծանքը եւ գրականագիտութիւնը»: Ուրեմն, չուսումնասիրուած է մնացել սփիւռփախյալ գրական վաստակի կարեւոր մեծ մի բաժին, որի համար էլ աշխատութիւնը վերանագրուել է «Ուրուագծեր»: Գեղամ Սեւանը վարուել է այնպէս, ինչպէս կը վարուէր ինքն իրեն եւ իր կոչումը յարգող իւրաքանչիւր բարեխիղճ գիտնական:

«Ուրուագծեր» աշխատութեան ստեղծման ժամանակներում գրուած այս եւ նման աշխատութիւններ ճիշտ գնահատելու, նրանց «սխալներին», «թերիներին ու «պակասութիւններին» ըմբռնումով մօտենալու համար, մեր օրերի ընթերցողը պէտք է իմանայ, որ այդ «սխալներն» ու «թերիները» յաճախ ժամանակաշրջանի գաղափարախօսութեան պարտադիր անխուսափելի նստուածքներ կամ հետքեր են: Պէտք է իմանան, որ այդ աշխատութիւնները մինչեւ գրուեն՝ աւարտուեն ու լոյսին գան, անցել են երկա՛ր, դարձդարձիկ, խոչ ու խութերով լի բամբայ, շատ յաճախ վտանգաւոր շրջանցումներ կատարելով գաղափարական փշալարերի շուրջ: «Զեւով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական» լոգունգը միայն մէկն է «գաղափարական այդ փշալարերից»: Ու եթէ յիշեալ շրջանցումների ժամանակ հեղինակները իրենց «Ոսկեգեղմ»ից ծուէններ են թողել այդ փշալարի վրայ, չպէտք է զարմանալի եւ գայթակղեցուցիչ թուան մեր օրերի ընթերցողներին: Այս տեսակետից բացառութիւն չէր կարող կազմել, ու չկազմեց սովետական ո՛չ մի

գրող, այդ թւում նաեւ Գեղամ Սեւանը:

Սփիւռփահայ ցրուած–տարտղնուած գրականութեան ուսումնասիրութիւնն ու ըստ ամենայնի արժեւորումը Գ. Սեւանի սրտաձոտ, վաղեմի երազն էր, որի իրականացման գործնական սկիզբը պէտք է համարել 1962ին ԳԱԱ Մանուկ Արեղեանի անուան Գրականութեան Ինստիտուտում նրա աւագ գիտաշխատող նշանակումը: Նա իր թափառ կեանքում առաջին անգամ լինելով հանապազօրեայ նստակեաց աշխատանքի պետականօրէն երաշխաւորուած հնարաւորութիւն ստացաւ: Եւ յամառ ու անձանձիր աշխատեց, պրպտեց, լայնածաւալ նիւթ կուտակեց: Այսպէս՝ համարեայ 27 տարիներ: Այդ ընթացքում նա գրեց ու հրատարակեց սփիւռփահայ գրականութեան ու գրողների մասին բազում յօդուածներ, գրախօսութիւններ, գրքերի առաջարկներ, ուսումնասիրութիւններ, «Սփիւռփահայ գրականութիւն» խորագրով ծաւալուն Դոկտորական թեզ եւ երկու ուշագրաւ մենագրութիւններ՝ «Վազգէն Շուշանեան» եւ «Յակոբ Մնձուրի» (1981): Երկար տարիների լարուած աշխատանքի եւ այս մեծ կուտակումների հիմքի վրայ Գ. Սեւանն ստեղծեց «Սփիւռփահայ Գրականութեան Պատմութեան Ուրուագծեր» հիմնարար, երկհատոր աշխատութիւնը: Լծուելով տարիների տփնաջան աշխատանք պահանջող, յաճախ ինքն իր մէջ հակասական, երբեմն ինքն իրեն ժպտող, մերթ վսեմ ու մեծարժէք,

մերթ հասարակ ու թերարժէք, «խայտաբղետ եւ ուսումնասիրման համար այնքան դժուարին» (Գ. Սեւան) «Սփիւռփահայ Գրականութեան Ուրուագծեր» ստեղծելու դժուարից էլ դժուար գործին, ի՞նչ է նպատակադրել, ինչի՞ է ձգտել Գ. Սեւանը եւ ի՞նչ է ձեռք բերել, ինչի՞ է հասել:

Մէկ անհատի ուժերից վեր, իսկաւ աշխատատար եւ մեծապէս պատասխանատու այս աշխատութեան յանձնարման հիմնական դրդապատճառը Գ. Սեւանի համար եղել է «պաշտամունքի» չափ սիրած սփիւռփահայ գրականութեան ընդհանուրի ուշադրութիւնից դուրս մնացած, իր բախտին թողնուած եւ համարեայ թէ թողլեալ վիճակը, որի հետեւանքով նա մինչ օրս չունի արժանի քննաչում ու գնահատական:

«Ուրուագծեր» աշխատութեան առաջին հատորի նախաբանում Գ. Սեւանը այսպէս է ներկայացրել վիճակը.

«Սփիւռփահայ գրականութեան առաջին տասնամեակները, մասնաւորապէս նրա կազմաւորման շրջանը (1930ական թուականներ), մինչեւ երկրորդ համաշխարհային պատերազմի աւարտը համեմատաբար ամէնից համաշխարհային պատերազմի աւարտը համեմատաբար ամէնից քիչ են ուսումնասիրուած եւ կարօտ են գիտական լուրջ հետազօտման:

(շարունակելի) ՍԱՐԳԻՍ ԵԱՓՈՒՃԵԱՆ